

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ:**

1. Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են հուլիսի 12-ից 23-ը Համալսարանի ընդունելության կենտրոնում (Տերյան 105, 3-րդ մասնաշենք, 1-ի հարկ):
2. Դիմորդը՝ Համալսարանի ընդունելության կենտրոնին (ընդունող հանձնաժողովին), իսկ անչափահաս լինելու դեպքում օրինական ներկայացուցչի (ծնողի, որդեգրողի կամ հոգաբարձուի) հետ ներկայացնում է՝
 - 1) դիմում,
 - 2) 4 լուսանկար (3x4 չափսի)
 - 3) 9-րդ դասարանի ավարտական վկայականի պատճենը,
 - 4) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, կամ ծննդյան վկայական),
 - 5) ծնողի անձնագրի պատճենը
 - 6) ՀԾՀ (սոցիալական քարտի) պատճեն:
3. Գիտելիքների ստուգման համար նախատեսված թեստերը կազմված են 28 առաջադրանք մաթեմատիկայից և 12 առաջադրանք ֆիզիկայից, գումարային 40 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 0,5 միավոր: Առաջադրանքների լուծման համար դիմորդին տրվում է 2,5 ժամ:
4. Դիմորդների գիտելիքների ստուգումը իրականացվելու է հուլիսի 26-ին, 27-ին, 28-ին և 29-ին (դիզայն ենթահոսքի հարցազրույց)՝ ժամը 9:00-ին «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Երևանի ավագ դպրոցում (Տերյան 105, 7-րդ մասնաշենք):
5. Դիմորդները առաջադրանքների լուծման արդյունքները լրացնում են ծածկագրված ձևաթերթում:
6. Դիմորդները գիտելիքների ստուգմանը ներկայանում են նշված ժամին համապատասխան ներկայաթերթով: Ոչ հարգելի պատճառով ուշացումով ներկայացած դիմորդները զրկվում են գիտելիքների ստուգման և ընդունելության մրցույթին մասնակցելու իրավունքից:
7. Դիմորդների գիտելիքների ստուգման լսարանները և նստատեղերը որոշվում է վիճակահանությամբ:
8. Նախնական ցուցում-բացատրություններից հետո դիմորդին տրվում է համապատասխան թեստային տարբերակը և նշվում է ժամանակը:
9. Քննասենյակներում հսկողությունն իրականացնում են ընդունող հանձնաժողովի անդամները և ավագ դպրոցի տնօրենի կողմից նշանակված աշխատակիցները:

10. Դիմորդների գիտելիքների ստուգումը իրականացվում է 20 միավորանի համակարգով, դրական են համարվում 8 ութ և ավել միավորները: Դրական գնահատված դիմորդները մասնակցում են ընդունելության մրցույթին:
11. Դիմորդների գիտելիքների ստուգման և ընդունելության մրցույթի արդյունքները ընդունելության կենտրոնը հրապարակում է (համալսարանի պաշտոնական կայքում և հայտարարությունների համար նախատեսված վայրում) սահմանված առարկաներից գիտելիքների ստուգման վերջնաժամկետի հաջորդ օրը առավոտյան 11:00-ին:
12. Դիմորդները՝ ընդունելության մրցույթի հրապարակման պահից՝ ժամը 11:00—ից մինչև 17:00-ն կարող են դիմում-բողոք ներկայացնել ընդունող հանձնաժողովին գրավոր եղանակով: